



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ՄԻԱՍՆԱԿԱՆ ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՎ**

Երևան, Կառավարական պտն 1

Ո Ր Ո Շ ՈՒ Մ 02/01

(«Սպորտ տուր» ՍՊ ընկերության 14.12.2017թ.-ի վարչական բողոքը
բավարարելու մասին)

Ք. ԵՐԵՎԱՆ

«20» հունվարի 2018թ.

ՀՀ տեսչական մարմինների միասնական բողոքարկման հանձնաժողովը՝ նախագահությամբ ՀՀ վարչապետ Կարեն Կարապետյանի, ուսումնասիրելով ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովի 10.10.2017թ. թիվ 55/4 որոշման վերաբերյալ «Սպորտ տուր» ՍՊ ընկերության 14.12.2017թ.-ի վարչական բողոքը՝

Պ Ա Ր Ձ Ե Ց

1. Բողոքի էությունը և ներկայացված պահանջը.

«Սպորտ տուր» ՍՊ ընկերությունը (այսուհետ նաև՝ Ընկերություն կամ Բողոք բերած անձ)՝ ի դեմս ներկայացուցիչ Կարեն Տոնոյանի, բողոք է ներկայացրել ՀՀ տեսչական մարմինների միասնական բողոքարկման հանձնաժողով (այսուհետ՝ նաև Հանձնաժողով)՝ ՀՀ ԿԱ ՊԵԿ հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովի (այսուհետ նաև՝ Գանգատարկման հանձնաժողով) 10.10.2017թ. թիվ 55/4 որոշման (այսուհետ նաև՝ Որոշում) վերաբերյալ:

Բողոքը մուտքագրվել է Հանձնաժողովի քարտուղարություն 14.12.2017թ.-ին:

Բողոք բերած անձը հայտնել է, որ ՀՀ ԿԱ ՊԵԿ նախագահի կողմից 29.11.2016թ. տրված թիվ 1011548 հանձնարարագրի հիման վրա Ընկերությունում իրականացվել է ստուգում:

Ստուգման արդյունքներով 23.08.2017թ. կայացվել է ակտ, որով շահութահարկի և ավելացված արժեքի հարկի (այսուհետ՝ նաև ԱԱՀ) մասով առաջադրվել են լրացուցիչ հարկային պարտավորություններ:

Ընկերությունը 06.09.2017թ. ներկայացրել է դիմում ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտե՝ վարչական վարույթում առկա բոլոր փաստաթղթերի պատճենները տրամադրելու մասին՝ նշելով, որ դրանք անհրաժեշտ են ստուգման ակտը բողոքարկելու համար:

Ընկերությունը 15.09.2017թ. ստացել է ՀՀ ԿԱ ՊԵԿ իրավաբանական վարչության պետի պատասխան գրությունը, որով վերջինս հայտնել է, որ ստուգման ակտը (վարչական վարույթի բոլոր նյութերը) փոստային առաքմամբ ուղարկվել է Ընկերության տնօրենին, և առաջարկվել է ճշտել լրացուցիչ տրամադրման ենթակա փաստաթղթերի ցանկը: Ըստ Բողոք բերած անձի, նման բովանդակությամբ պատասխանը (դիմումը մերժելը) իրենց կողմից դիտարկվել է որպես միտումնավոր քայլ՝ ստուգման ակտը բողոքարկելուն ուղղված գործողություններին խոչընդոտելու նպատակով:

Ընկերությունը ՀՀ ԿԱ ՊԵԿ իրավաբանական վարչության պետի գործողությունները ոչ իրավաչափ ճանաչելու վերաբերյալ 15.09.2017թ. բողոք է ներկայացրել Գանգատարկման հանձնաժողով: Բողոքի հետ միաժամանակ ներկայացվել է դիմում գործում առկա բոլոր փաստաթղթերը տրամադրելու մասին, որի արդյունքում փաստաթղթերը տրամադրվել են՝ բացառությամբ ՀՀ ԿԱ ՊԵԿ նախագահի հրամանների հիմքում ընկած զեկուցագրերի:

Ընկերությունը 05.10.2017թ. կրկին դիմում է ներկայացրել զեկուցագրերի պատճենները տրամադրելու մասին, սակայն դրանք չեն տրամադրվել:

Գանգատարկման հանձնաժողովը 10.10.2017թ. որոշում է կայացրել բողոքը մերժելու մասին, որն օրինական, հիմնավորված և պատճառաբանված չէ: Մասնավորապես՝ Գանգատարկման հանձնաժողովը բողոքը մերժել է՝ փաստելով, որ գործի նյութերը 27.09.2017թ. տրամադրվել են՝ չանդրադառնալով և գնահատական չտալով ՀՀ ԿԱ ՊԵԿ իրավաբանական վարչության պետի կողմից առաջին դիմումով փաստաթղթերը չտրամադրելու հանգամանքին: Այսինքն, Գանգատարկման հանձնաժողովը ընդհանրապես չի քննարկել բողոքն այդ մասով:

Ըստ բողոք բերած անձի, ՀՀ ԿԱ ՊԵԿ նախագահի հրամանների հիմքում ընկած զեկուցագրերը չտրամադրելու մասով Գանգատարկման հանձնաժողովի

կողմից «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 39-րդ հոդվածի 3-րդ մասի և ՀՀ կառավարության 2004թ. հունիսի 25-ի թիվ 975-Ն որոշման 10-րդ կետի կիրառումը ոչ իրավաչափ է:

Մասնավորապես, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 39-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն. «Վարչական վարույթի նյութերը տրամադրելիս վարչական մարմինը պարտավոր է պահպանել պետական և ծառայողական գաղտնիքը, ինչպես նաև օրենքով պահպանվող այլ գաղտնիքներ, իսկ այդպիսի գաղտնիքներ տրամադրելիս՝ պարտավոր է պահպանել համապատասխան գաղտնիքի մասին օրենքով սահմանված կարգն ու պայմանները»:

ՀՀ կառավարության 2004թ. հունիսի 25-ի թիվ 975-Ն որոշման 10-րդ կետի համաձայն. «Հարուցված յուրաքանչյուր վարչական վարույթով կազմվում է առանձին գործ, որում ժամանակագրական կարգով ներառվում են տվյալ վարույթի հետ կապված անձի դիմումը և մյուս բոլոր փաստաթղթերը (ծանուցումներ, միջնորդություններ և այլն), տեղեկությունները, գործով ձեռք բերված ապացույցները՝ ներառյալ մյուս իրեղեն նյութերը, տվյալ գործով վարչական մարմին կամ նրա վերադաս վարչական մարմին բերված բողոքը, դատարան ներկայացված հայցը և դատարան բերված բողոքը, դրանց կապակցությամբ կայացված վարչական կամ դատական ակտերը, հարկադիր կատարման դեպքում՝ նաև դրան առնչվող փաստաթղթերը, ինչպես նաև վարույթի ընթացքում ընդունված վարչական ակտը»:

Զեկուցագրերը վերաբերել են ստուգման ժամկետի կասեցմանը, կասեցված ժամկետի երկարաձգմանը և ստուգման ժամկետի երկարաձգմանը, հետևաբար անհնար է, որ ստուգման ժամկետի կասեցման կամ ժամկետի երկարաձգման մասին զեկուցագիրը հանդիսանա գաղտնիք:

«Ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ ստուգման ընթացքում առանձին տեղեկությունների ճշտման անհրաժեշտություն առաջանալու կամ ստուգմանն առնչվող փաստաթղթերը հետաքննության, նախաքննության կամ դատարանի վճռի հիման վրա առգրավված լինելու կամ տարերային աղետի պատճառով կամ ստուգման իրականացումն անհնարին դարձնող այլ անկանխատեսելի հանգամանքի բերմամբ ստուգում իրականացնող պաշտոնատար անձի (անձանց) գրավոր զեկուցագրի

հիման վրա ստուգում իրականացնելու մասին հրաման տվող պաշտոնատար անձի հրամանով ստուգման ընթացքը կասեցվում է՝ մինչև կասեցման հիմքի վերացումը, բայց ոչ ավելի, քան 90 աշխատանքային օրով, իսկ օտարերկրյա պետություններ և քրեական վարույթ իրականացնող մարմիններ հարցումներ կատարելու դեպքում՝ հարցման պատասխանը ստանալուց հետո, ինչպես նաև ստուգմանն առնչվող փաստաթղթերը հետաքննության, նախաքննության կամ դատարանի վճռի հիման վրա առգրավված լինելու դեպքում՝ դրանք վերադարձվելուց հետո ոչ ավելի, քան 10 աշխատանքային օրով:

Բողոք բերած անձը պնդում է, որ վերոհիշյալ հոդվածի բովանդակային վերլուծության և համադրման արդյունքում պետք է արձանագրել, որ օրենսդիրը նախատեսել է ստուգում իրականացնող պաշտոնատար անձի (անձանց) գրավոր զեկուցագրի հիման վրա ստուգում իրականացնելու մասին հրաման տվող պաշտոնատար անձի հրամանով ստուգման ընթացքի կասեցման 4 հիմք՝

1) ստուգման ընթացքում առանձին տեղեկությունների ճշտման անհրաժեշտություն առաջանալու դեպքում,

2) ստուգմանն առնչվող փաստաթղթերը հետաքննության, նախաքննության կամ դատարանի վճռի հիման վրա առգրավված լինելու դեպքում,

3) տարերային աղետի պատճառով,

4) ստուգման իրականացումն անհնարին դարձնող այլ անկանխատեսելի հանգամանքի բերմամբ:

Նշվածի հիման վրա կարելի է առանձնացնել ստուգման կասեցման հիմքերի երեք հիմնական խումբ՝ 1) առանձին տեղեկությունների ճշտման վերաբերյալ հարցումներ, 2) ստուգմանն առնչվող փաստաթղթերի առգրավված լինելը, 3) ստուգման իրականացման անհնարինություն, ինչից հետևում է, որ օրենքով սպառիչ կերպով սահմանվել են ստուգման կասեցման հիմքերը, որոնց շրջանակից դուրս որևէ հանգամանք չի կարող հիմք հանդիսանալ ստուգման ընթացքը կասեցնելու համար:

Բողոք բերած անձը պնդում է, որ վերը նշված հիմքերից որևէ մեկը չի կարող պարունակել գաղտնիք, իսկ այլ հիմքով, որը կարող էր պարունակել գաղտնիք, ստուգման ժամկետը կասեցնելը կամայականություն է:

Դատարաններն իրենց կողմից ընդունված դատական ակտերում բազմիցս անդրադարձել են զեկուցագրերին՝ բարձրացնելով գործում դրանց առկայության և

հիմնավորվածության վերաբերյալ հարցը: Մասնավորապես, ՀՀ վարչական դատարանը թիվ ՎԴ3/0210/05/17 գործով անդրադառնալով վարույթի նյութերում զեկուցագրերի առկայության հարցին, նշել է. «..... դատարանի պահանջով ներկայացված համապատասխան վարչական վարույթի նյութերում բացակայում են նաև թվով երկու հրամաններում հիշատակված ստուգող անձանց 13.04.2017 և 02.05.2017 թվականի զեկուցագրերը, որպիսի պարագայում, վարչական դատարանի գնահատմամբ, հիշյալ հրամանները տրվել են առանց ստուգումն իրականացնող պաշտոնատար անձանց գրավոր հիմնավորման, ինչը հանգեցրել է «Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի 2-րդ մասի հրամայական պահանջների խախտման:

Մեկ այլ՝ թիվ ՎԴ3/0267/05/16 վարչական գործով դատարանը նշել է. «..... Հիմք ընդունելով սույն գործով հաստատված փաստական հանգամանքները՝ վարչական դատարանը, նախ, արձանագրում է, որ ստուգող տեսուչներ Ա. Ռուբենյանի և մյուսների կողմից 07.10.2016 թվականի զեկուցագիրը, որի մասին հիշատակված է ՀՀ ԿԱ ՊԵԿ նախագահի 07.10.2016 թվականի թիվ Ս-1651-Ա հրամանում, դատարանի պահանջով այդպես էլ չի ներկայացվել, ուստի կարելի է եզրահանգել, որ այն չի ընդգրկվել համապատասխան ստուգման վարչական վարույթի նյութերի կազմում: Հետևաբար ՀՀ ԿԱ ՊԵԿ նախագահ Հ. Հովսեփյանի 07.10.2016 թվականի թիվ Ս-1651-Ա հրամանը տրվել, իսկ ստուգման սահմանված ժամկետն երկարաձգվել է մինչև 10 անընդմեջ աշխատանքային օր առանց անհրաժեշտության՝ ստուգումն իրականացնող պաշտոնատար անձի գրավոր հիմնավորման բացակայությամբ»:

Ինչ վերաբերում է ՀՀ կառավարության 2004թ. հունիսի 25-ի թիվ 975-Ն որոշմանը, ըստ Բողոք բերած անձի, այն որևէ արգելող նորմ չի սահմանում զեկուցագրերը տրամադրելու մասին: Որոշման 10-րդ կետը վերաբերում է վարչական վարույթով կազմվող գործի նյութերին, որտեղ կոնկրետ թվարկված չեն այն բոլոր փաստաթղթերը, որոնք պետք է լինեն վարչական վարույթում: Որոշման 10-րդ կետում նշված է, որ վարչական վարույթում ներառվում են տվյալ վարույթի հետ կապված անձի դիմումը և մյուս բոլոր փաստաթղթերը (ծանուցումներ, միջնորդություններ և այլն): Փաստորեն, ըստ Բողոք բերած անձի, նշված որոշման պահանջը՝ բոլոր փաստաթղթերը գործում ներառելու մասին, չի իրականացվում,

ինչով խախտվում է ՀՀ կառավարության որոշումը:

Ուշադրության է արժանի նաև այն հանգամանքը, որ ոչ բոլոր գործերով են ՀՀ ԿԱ ՊԵԿ մարմինները գտնում, որ զեկուցագիրը չի հանդիսանում վարչական վարույթի նյութ: Մասնավորապես, թիվ ՎԴ/2681/05/15 վարչական գործով վճռի ուսումնասիրությունից բխում է, որ զեկուցագրերը ներկայացված են եղել գործի նյութերում, որի վերաբերյալ դատարանը նշել է. «Բացի այդ, դատարանի համոզմամբ ստուգման ընթացքի կասեցումը չպետք է լինի ինքնանպատակ, չհիմնավորված ու չպատճառաբանված, այլ ընդհակառակը յուրաքանչյուր դեպքում պետք է հստակ նկարագրվի, թե ինչի հիման վրա է առաջացել կասեցման անհրաժեշտությունը, ինչ գործողություններ պետք է իրականացվեն ստուգողների կողմից, ինչ հանգամանքներ պետք է պարզվեն, ինչքան ժամանակ է անհրաժեշտ և այլն: Տվյալ դեպքում, դատարանը, ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության օպերատիվ հետախուզության վարչության 9-րդ բաժնի 02.06.2014, 14.07.2014, 27.08.2014 թվականների զեկուցագրերը, եզրահանգում է, որ դրանց հիման վրա առհասարակ ստուգման ընթացքը չէր կարող կասեցվել, քանի որ, նախ՝ ընկերության տնօրենի փոփոխումը «Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենքով նախատեսված չէ որպես կասեցման հիմք, հետո էլ, նկարագրված և պարզաբանված չեն կասեցման համար հիմք հանդիսացած փաստական հանգամանքները, մասնավորապես, պարզ չէ՝ ինչ հարցեր պետք է ճշտվեն, ումից, արդյոք նախորդ կասեցումից հետո ինչ որ հարցեր ճշտվել են, թե՛ ոչ: Նշված զեկուցագրերի համար հիմք հանդիսացած փաստական հանգամանքների մասին տեղեկություններ չկան նաև Պատասխանողի ներկայացուցիչների կողմից ներկայացված ողջ վարչական վարույթի նյութերում:

Նման պայմաններում, դատարանը, չնայած անթույլատրելի է համարում վերը նշված զեկուցագրերի հիման վրա ստուգման ընթացքի կասեցումը, այնուամենայնիվ, անհրաժեշտ է համարում անդրադառնալ նաև հետևյալին...»:

Ըստ Բողոք բերած անձի, դատարանների կողմից արտահայտած իրավական դիրքորոշումներից բխում է, որ հրամանների հիմքում ընկած զեկուցագրերը պարտադիր կերպով պետք է առկա լինեն վարչական վարույթի նյութերում և լինեն հիմնավորված, իսկ դրանց բացակայությունը կամ հիմնավորված չլինելը հիմք է այդ ակտերն անվավեր ճանաչելու համար:

Հետևաբար, ըստ Բողոք բերած անձի, զեկուցագրերը կամ իրականում գոյություն չունեն կամ էլ բացարձակապես զուրկ են որևէ իրավական և փաստական հիմքից, այդ պատճառով ՀՀ ԿԱ ՊԵԿ կողմից դրանք չեն տրամադրվում, իսկ Գանգատարկման հանձնաժողովը, իմանալով այդ ամենը, փորձում է քողարկել խախտումը:

Վերոգրյալի հիման վրա Բողոք բերած անձը խնդրել է բավարարել ներկայացված բողոքն ամբողջությամբ՝ ճանաչելով ՀՀ ԿԱ ՊԵԿ իրավաբանական վարչության պետի գործողությունը և դրա հիման վրա Գանգատարկման հանձնաժողովի Որոշումը ոչ իրավաչափ և պարտավորեցնել ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեին անհապաղ տրամադրել ՀՀ ԿԱ ՊԵԿ նախագահի հրամանների հիմքում ընկած զեկուցագրերի պատճենները:

Բողոք բերած անձի կողմից ներկայացվել է նաև բողոք բերելու ժամկետը բաց թողնելը հարգելի համարելու վերաբերյալ միջնորդություն՝ նշելով, որ Գանգատարկման հանձնաժողովի 10.10.2017թ. թիվ 55/4 որոշումը Ընկերությանն ուղարկվել է 13.10.2017թ.-ին, իսկ Ընկերության կողմից ստացվել է 16.10.2017թ.-ին: Նշվածի կապակցությամբ Ընկերությունը Հանձնաժողովին ուղղված 08.01.2017թ. դիմումով ներկայացրել է փոստային առաքման ծրարի պատճենը, որի վրա առկա կնիքների համաձայն՝ այն հանձնվել է փոստային ծառայությանը 14.10.2017թ.-ին, իսկ Ընկերության կողմից ստացվել է 16.10.2017թ.-ին: Խնդրել է նշված փաստաթուղթը կցել գործի նյութերին:

2. Մասնակցի դիրքորոշումը.

Բողոք բերած անձի դիրքորոշումը հստակեցնելու նպատակով Հանձնաժողովը 2018թ.-ի հունվարի 20-ին անցկացրել է լսումներ, որին ներկայացել էր «Սպորտ տուր» ՍՊ ընկերության ներկայացուցիչ Կարեն Տոնոյանը:

Վերջինս լսումների ընթացքում պնդեց բողոքի շրջանակներում ներկայացված իրավական և փաստական հիմնավորումները. Հանձնաժողովին բողոքի առնչությամբ նոր նյութեր և տեղեկատվություն չներկայացվեց:

3. Բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.

Բողոք բերած անձի և ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի կողմից Հանձնաժողովին ներկայացված փաստաթղթերի ուսումնասիրության արդյունքում

գտնում ենք, որ սույն դիմումի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստական հանգամանքները.

3.1. ՀՀ ԿԱ ՊԵԿ իրավաբանական վարչության պետը 08.09.2017թ. թիվ 11-1/35846-17 գրությամբ ի պատասխան Ընկերության 06.09.2017թ. դիմումի հայտնել է. ««Սպորտ Տուր» ՍՊ ընկերության (ՀՎՀՀ 03014209) վերաբերյալ 23.08.2017 թվականին կայացված թիվ 1011548 ստուգման ակտը (վարչական վարույթի բոլոր նյութերը) 29.08.2017 թվականին փոստային առաքմամբ ուղարկվել է ընկերության տնօրենին: Ելնելով վերոգրյալից առաջարկում ենք ճշտել լրացուցիչ տրամադրման ենթակա փաստաթղթերի ցանկը»:

3.2. Ընկերությունը 15.09.2017թ.-ին Գանգատարկման հանձնաժողովին ներկայացրել է գանգատ՝ խնդրելով ՀՀ ԿԱ ՊԵԿ իրավաբանական վարչության պետի գործողությունը ճանաչել ոչ իրավաչափ և անհապաղ տրամադրել վարչական վարույթում առկա բոլոր փաստաթղթերի պատճենները:

3.3. Գանգատի քննության արդյունքում Գանգատարկման հանձնաժողովը 10.10.2017թ. թիվ 55/4 որոշմամբ գանգատը մերժել է:

3.4. Բողոք բերած անձի կողմից ներկայացված թիվ RG004727995AM փոստային ծրարի հետնամասում առկա կնիքների համաձայն՝ այն ելքագրվել է 14.10.2017թ.-ին և Ընկերության կողմից ստացվել է 16.10.2017թ.-ին: Ծրարի վրա առկա է «Ելքի թիվ 11-1/41568-17» բովանդակությամբ գրառում, որն ամբողջությամբ համընկնում է Գանգատարկման հանձնաժողովի նախագահի կողմից թիվ 55/4 որոշումը կողմին ուղարկելու վերաբերյալ ելից գրության համարին:

3.5. ՀՀ ԿԱ ՊԵԿ-ի կողմից տրամադրվել են բողոքարկված ստուգման վարույթին առնչվող թվով հինգ զեկուցագրեր:

4. Պատճառաբանություններ և եզրահանգումներ.

Բողոքի և դրա քննարկման համար էական նշանակություն ունեցող փաստական հանգամանքների ուսումնասիրության արդյունքում Հանձնաժողովը գտնում է, որ բողոքը ենթակա է բավարարման՝ հետևյալ հիմնավորմամբ.

Նախ, անդրադառնալով Բողոք բերած անձի միջնորդությանը՝ բողոք ներկայացնելու համար օրենքով սահմանված ժամկետի բացթողումը հարգելի համարելու վերաբերյալ, Հանձնաժողովը գտնում է այն առարկայազուրկ է, քանի որ Բողոք բերած անձի կողմից ներկայացված թիվ RG004727995AM փոստային ծրարի

հետնամասում առկա կնիքների և ժամկետների նշումից հետևում է, որ բողոքը ներկայացվել է «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 71-րդ հոդվածի 1-ին մասի «ա» կետով սահմանված երկամսյա ժամկետի պահպանմամբ, հետևաբար առկա չէ բաց թողնված ժամկետ, արդյունքում նաև՝ ժամկետի բացթողումը հարգելի համարելու անհրաժեշտություն:

Ինչ վերաբերում է բողոքի էությանը, Հանձնաժողովն էական է համարում անդրադառնալ հետևյալ հարցադրումներին՝

- Բողոք բերած անձի կողմից պահանջվող զեկուցագրերը հանդիսանում են արդյոք վարչական վարույթի նյութեր.

- բողոքարկվող գործի շրջանակներում առկա՞ են արդյոք զեկուցագրերի՝ որպես վարչական վարույթի նյութերի տրամադրման համար արգելք հանդիսացող օրենքով սահմանված հանգամանքներ:

Առաջին հարցադրման առնչությամբ Հանձնաժողովը գտնում է, որ զեկուցագրերը ենթակա են գնահատման որպես վարչական վարույթի մաս կազմող նյութեր՝ հետևյալ հիմնավորմամբ. «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ առանձին տեսակի վարչական վարույթների առանձնահատկությունները սահմանվում են օրենքներով և Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով:

Նշված կարգավորմանը համահունչ հարկ է արձանագրել, որ ստուգումը հանդիսանում է առանձին տեսակի վարչական վարույթ, որի շրջանակներում ծագած հարաբերությունների նկատմամբ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի դրույթները կիրառելի են այնքանով, որքանով դրանք կարգավորված չեն ստուգման՝ որպես առանձին տեսակի վարչական վարույթի առանձնահատկությունները սահմանող օրենքներով:

Վերոգրյալի հաշվառմամբ Հանձնաժողովը գտնում է, որ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 28-րդ հոդվածի ուժով, համաձայն որի՝ վարչական վարույթ հարուցելու պահից վարչական մարմինը կազմում է առանձին գործ, որում պահվում են տվյալ վարույթին առնչվող բոլոր փաստաթղթերը, այդ թվում՝ վարույթի արդյունքում ընդունված վարչական ակտը (դրա հաստատված պատճեն), զեկուցագրերը ենթակա են գնահատման որպես ստուգման վարույթին առնչվող փաստաթղթեր, քանի որ «Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ

օրենքի 4-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ ստուգման ընթացքի ինչպես երկարաձգումը, այնպես էլ կասեցումը, որն անմիջականորեն ենթադրում է նաև կասեցման երկարաձգումը, պետք է լինեն հիմնավորված, որպիսի պահանջն անմիջականորեն առարկայանում է ստուգման շրջանակներում կազմված զեկուցագրերում:

Ընդ որում, ՀՀ կառավարության 2004թ. հունիսի 25-ի թիվ 975-Ն որոշման մեջ «զեկուցագիր» բառի բացակայությունը չի կարող գնահատվել որպես նշված փաստաթղթի՝ վարչական վարույթի նյութ հանդիսանալը բացառող հանգամանք, քանի որ ՀՀ կառավարության թիվ 975-Ն որոշումը չի ներառում նման փաստաթղթերի սպառիչ թվարկում, ավելին՝ չի հետապնդում նման նպատակ, քանի որ օրենքի իմաստով այդպիսին հանդիսանում է վարչական վարույթին առնչվող ցանկացած փաստաթուղթ:

Նշված եզրահանգման արդյունքում Հանձնաժողովն անդրադառնալով երկրորդ հարցադրմանը, գտնում է, որ սույն գործով բացակայում են զեկուցագրերի՝ որպես վարչական վարույթի նյութերի տրամադրման համար արգելք հանդիսացող օրենքով սահմանված հանգամանքներ՝ հետևյալ հիմնավորմամբ.

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 39-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ վարչական վարույթի նյութերը տրամադրելիս վարչական մարմինը պարտավոր է պահպանել պետական և ծառայողական գաղտնիքը, ինչպես նաև օրենքով պահպանվող այլ գաղտնիքներ, իսկ այդպիսի գաղտնիքներ տրամադրելիս՝ պարտավոր է պահպանել համապատասխան գաղտնիքի մասին օրենքով սահմանված կարգն ու պայմանները:

Նշվածից հետևում է, որ օրենքը սահմանել է այն պայմանը, որի առկայության դեպքում կարող է սահմանափակվել վարչական վարույթի նյութերին ծանոթանալու անձի իրավունքը՝ կապված օրենքով սահմանված համապատասխան գաղտնիքի տրամադրման իրավական ռեժիմի հետ, որը սույն գործի շրջանակներում բացակայում է և Գանգատարկման հանձնաժողովի կողմից առկա չէ պատշաճ հիմնավորում առ այն, որ պահանջվող զեկուցագրերի մասով առկա է նման սահմանափակում:

Արդյունքում Հանձնաժողովը գտնում է, որ Գանգատարկման հանձնաժողովի եզրահանգումն առ այն, որ պահանջվող զեկուցագրերը հանդիսանում են ներքին

գործավարական և ծառայողական փաստաթղթեր, որոնք չեն ներառվում վարչական վարույթի նյութերի մեջ, ամբողջությամբ անհիմն է:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 63-րդ հոդվածի 1-ին մասի «ա» կետի համաձայն՝ անվավեր է առ ոչինչ չհանդիսացող այն ոչ իրավաչափ վարչական ակտը, որն ընդունվել է օրենքի խախտմամբ, այդ թվում՝ օրենքի սխալ կիրառման կամ սխալ մեկնաբանման հետևանքով:

Նույն օրենքի 77-րդ հոդվածի 1-ին մասի «ա» կետի համաձայն՝ վարչական ակտի փոփոխման կամ բեկանման հիմքերն են սույն օրենքի 63-64-րդ հոդվածներով սահմանված հիմքերը:

Վերոգրյալի արդյունքում՝ ղեկավարվելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 77-րդ հոդվածի 1-ին մասի «ա» կետի, 76-րդ հոդվածի 4-րդ մասի պահանջներով՝

Ո Ր Ո Շ Ե Ց

1. «Սպորտ տուր» ՍՊ ընկերության 14.12.2017թ.-ի վարչական բողոքը բավարարել. բեկանել ՀՀ ԿԱ ՊԵԿ հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովի 10.10.2017թ. թիվ 55/4 որոշումը և պարտավորեցնել Գանգատարկման հանձնաժողովին կայացնել բարենպաստ վարչական ակտ:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ակտի ընդունման մասին վարչական վարույթի մասնակցին իրազեկելուն հաջորդող օրվանից և կարող է բողոքարկվել դատական կարգով:

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝

ԿԱՐԵՆ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ